

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԱՆԻ

№ 5

ԱՏ. ՀԻՄԱԳԻՐԸ

ՔԱՂ ԶԻՆԻ ՈՐՈՇԵՐ

ԿՕՄԵԴԻԱ ՄԵԿ ԱՐԱՐԻԱՆՈՎ

(Փոխադրութիւն)

Հ-բդ տիտ.

ԹԻՖԼԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ. 7

1909

891.995
L-61

30 MAY 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԻՆ «Հ. ՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ

891.9945
L-61

№ 5

ԱՏ. ՀԻՄԻՉԱՆ

ՔԱՂ ԶԻՆԻ ՈՐՆԵՐ

ԿՕՄԵԴԻԱ ՄԵԿ ԱՐԱՐԻԱԾՈՎ

(Փոխադրութեան)

Հ-ՊԴ տիպ.

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրակավառ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՑԻ. ՊՕԼԻ. 7
1909



03 MAY 2013

9978

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Սենեակ երկու հանդիպ սկաց դռներով։ Բեմով
անցնում են մի խումբ երեխայք՝ տղաներ եւ
աղջիկներ, զինած փայտէ հրաց աններով ու դա-
շոյններով, զիսին թղթէ զիսարկներ, զարդարւած
գոյնզգոյն նկարներով։ Մ'էկը ածում է թմբուլ։
Վարդանը զնում է առջեւից իբրեւ զօրավար։

ԵՐԵԽԱՆԵՐ (միասին)

Մ'ԷԿ—ԵՐԿՈՒ, մ'ԷԿ—ԵՐԿՈՒ, մ'ԷԿ—ԵՐԿՈՒ...

ՎԱՐԴԱՆ

Կանգնեցէք, Ուղղեցէք (երեխաները կա-
տարուի են Վարդանի հրամանը: Վարդանը հը-
պարտ հպարտ դիտում է իր խումբը): Զորս չորս:
Դէպի աջ, դէպի ձախ. դէպի աջ, դէպի ձախ.
դէպի աջ...

ԵՐԻԱՆԴ

Այս ինչպիսի զօրավար է, շարունակ միե-
նոյն է ասում։ Այսպէս չի լինի, չէ։

ՎԱՐԴԱՆ

ԶԵ խօսել. կատարիր ինչ որ հրամայում եմ:
ԵՐԻԱՆԴ

Ի՞նչ է, մենք միշտ դէպի ձախ և դէպի
աջ պէտք է դառնանք։ Այդպէս հօ երբէք էլ
չենք վերջացնի։ Զեմ ուզում այդպէս խաղալ
(նստում է աթոռի վրա)։

ՏԵՍԻԼ

Դրան հարկաւոր է խիստ պատժել. դա մեր
մեծին չի լսում։

ԳՈՐծՈՂ ԱՆՁԻՆՔ

ՎԱՐԴԱՆ	ՏԵՍԻԼ
ԱԲԳԱՐ	ԳԱՅԻԱՆԻ
ԵՐԻԱՆԴ	ՄԱՐԳԱՐԻՏ

Տղաներ և աղջիկներ 6—12 տարեկան

366-3-62

ՎԱՐԴԱՆ
Դու գիտես թէ ես ով եմ: Ես էն ամենաշ-
մեծն եմ, ամենադլխաւոր զեներալն եմ:

ԵՐԻԱՆԴ

Օհ, օհ, շատ մեծ բան ես կարծում քո
գլուխդ:

ՎԱՐԴԱՆ:

Զինւորներ, մենք ո՞ր զօրախումբն ենք:

ՄԻ ՔԱՆԻՍԼ:

ՀԱՊԼԱՍՏԱԽԻ:

Ա.ԲԳԱՐ:

ՂԱՐԱԲԱՂԻ:

ՎԱՐԴԱՆ

Ապա թէ դուք էլ բան էք ասում:

ՄԱՐԴԱՐԻՏ

Աւելի լաւ է՝ Սուլթան Համիդի: Սուլթան
անունը ես շատ եմ սիրում:

ԵՐԻԱՆԴ

Այդ էլ ի՞նչ ես հնարել: Սուլթան Համիդը
հօ բաշիբզկների թափաւոր է, դու ուզում ես
բաշիբզուկ լինես:

Ա.ԲԳԱՐ:

Ես կը լինեմ, ես բաշիբզուկ կը լինեմ:

ՏԻԳՐԱՆ:

Այ լաւ միտք, գիտէք ինչպէս խաղանք:

Թող մեղանից մի քանիսը ոռւսներ լինեն, մի
քանիսն էլ բաշիբզուկներ:

ՄԻ ՔԱՆԻՍԼ:

Մենք բաշիբզուկ չենք լինի. հարկաւոր
չեն բաշիբզուկները:

Ա.ԲԳԱՐ:

Կը լինենք, կը լինենք: Ես մեծ վեզիրը կը
լինեմ, ես մեծ փաշայ կը լինեմ:

ՎԱՐԴԱՆ:

Շատ լաւ, իսկ ես կը լինեմ Տէր Ղուկա-
սեանցը և կը հրամայեմ իմ զինւորներին, որ
քեզ բռնեն: Տղայք, բռնեցէք այդ քաջ փաշային,
զերի տարէք զրան, գերի: (Երեխաները ուզում
են բռնել Արգարին, ըստ վայր են ծգում նրան).

ԵՐԻԱՆԴ

Այդ ի՞նչ էք անում, ամենքդ մէկի վրա էք
թափւել: (Արգարը վեր է կենում է եւ ուղղում):

ՏԻԳՐԱՆ:

Ոչինչ, պատերազմում ամեն բան կը պատահի:
ԵՐԻԱՆԴ:

Ամբողջ զօրքը մէկի ետևից երբէք չի ընկ-
նում: Մենք էլ հօ ճշմարիտ չենք պատերազ-
մում: Այդպիսով դրա բիթ ու պոտնդը կը ջար-
դէք, և դա կը սկսի լաց լինել: Եկէք աւելի
լաւ է այսպէս խաղանք. բաժանւենք երկու
մասի և գնանք զանազան կողմեր սենեակներով.

որտեղ որ իրար կը հանդիպենք, այնտեղ էլ կը
պատերազմենք: Տեսնենք՝ ով կը յաղթի:

ԵՐԵԽԱՆԵՐ (ուրախ)

Շատ լաւ, շատ լաւ: Այդպէս անենք:

ՎԱՐԴԱՆ:

Միայն մեզանից բաշիբուկ ով կը լինի,
բացի Աբգարից ոչոք հօ չի ուզում:

ԵՐԻԱՆԴ

Էհ, ոչինչ. մենք միայն խաղում ենք. ձըշ-
մարիտ հօ չենք պատերազմի: Եթէ ոչ, թող
այնպէս, երկու զանազան մասի բաժանենք:

ԱԲԳԱՐ:

Ես անպատճառ կը լինեմ զօրավար և ինքս
կը տանեմ իմ զօրքերը՝ այ այսպէս. մէկ-երկու,
մէկ-երկու, մէկ...

ՏԻԳՐԱՆ:

Մենք դեռ կը տեսնենք, ով կը լինի զօրա-
վար: Տեսնենք, քեզ կը նշանակեն թէ ոչ:

ԱԲԳԱՐ:

Ի՞նչ տեսնենք. ես այդպէս եմ ուզում:

ՎԱՐԴԱՆ:

Լաւ գլխաւոր ես. մոմերը որ հանգցնենք,
իսկոյն կը վախենառ. ես չըգիտեմքո բնաւորու-
թիւնը:

ԵՐԻԱՆԴ: (ընդմիջելով)

Լաւ, շատ մի խօսի: Եկէք դեռ համարենք՝

որքան ենք, իսկ յետոյ բաժանւենք երկու մա-
սի: (Կազմում են մի շղջան եւ երւանդը զարձը
համարում է, ցոյց տալով ամեն մէկի վրա
մատով, մէկ, երկու, եւ այլն):

ՎԱՐԴԱՆ:

Շատ լաւ, հիմա բաժանւենք այնպէս, որ
ամեն մի մասում հաւասար լինի: Տղայք, ապա
ով է գալիս իմ կողմը. ես նորից կը լինեմ զօ-
րավար:

ԳԱՅԻԱՆԻ:

Ես Վարդանի հետ կը լինեմ, Վարդանի հետ:
ԵՐԵԽԱՆԵՐ:

Ես Վարդանի կողմն եմ, Վարդանի հետ եմ:
ՏԻԳՐԱՆ

Շատ լաւ. ապա ով կը լինի ուրիշ մասում:
Երկի քաջ Աբգարի հետ ոչոք չի ուզում գնայ:

ԳԱՅԻԱՆԻ:

Աւելի լաւ է, որ Աբգարը չը լինի: Թող
երւանդը նրա տեղը լինի:

ԱԲԳԱՐ

Ես ոչոքի չեմ թողնի: Ես անպատճառ ու-
զում եմ լինեմ զօրավար, եթէ ոչ, չեմ խաղայ:

ԵՐԻԱՆԴ

Դէհ, թողէք որ լինի. իսկ մենք բաժան-
ւենք երկու մասի և վիճակ զցենք Վարդանի և
Աբգարի մէջ, որը որ մասի հետ գնայ (քաժա-

նում է երեխաներին այնպէս, որ մէկ մասում
լինում են Գայիանէն եւ Մարգարիտը, իսկ միւ-
սում Տիգրանը): Եկէք հիմա վիճակ գցենք:

ՎԱՐԴԱՆ

Զէ, գիտես՝ աւելի լաւ է, թող Տիգրանը
երկու ձեռները բարձրացնի և յետոյ մեր նշա-
նով մէկը իջեցնի: Իսկ մենք այստեղ կը պայմա-
նաւորւենք թէ որ ձեռքը իմն է, որը Արգարինը,

ԵՐԻԱՆԴ

Շատ լաւ: Տիգրան, զնա մի փոքր հեռու և
երկու ձեռներդ էլ բարձրացըրու: (Տիգրանը զը-
նում է. Երանդը փսխում է Արգարի և Վարդա-
նի ականջին: Տիգրանին) Որ ձեռքդ էլ ուզում
ես՝ իջեցրու: (Տիգրանը մի ծեռքը իջեցնում է)
Վարդանը Գայիանէի և Մարգարիտի մասումն
է, Արգարը մեր մասում:

ԳԱՅԻԱՆԸՆՔ

Լաւ նայեցէք Արգարին. չըլինի թէ լաց
լինի: Դա առանց դայեակի ոչինչ չի անում:

ԱԲԳԱՐ

Դու ինքդ ես ալդպէս. ես միշտ մենակ եմ
զբօնում, ես ոչինչից չեմ վախենում: Ուզում
ես, վառարանն էլ կը մտնեմ:

ՎԱՐԴԱՆ

Այ թէ քաջ ես. մէջը երկի սրբել ես ու-
զում: (Երեխաները ծիծաղութ են)

ԵՐԻԱՆԴ

Ինչու էք զուր ժամանակ կորցնում: Բա-
ժանւենք, շուտով, շուտով:

ՎԱՐԴԱՆ

Գնում ենք գնում: Ճանապարհ, տղայք:
Թմբուկն ածեցէք: (Վարդանի մասը զնում է աջ
ղոներով ասելով: Մէկ-Երկու, մէկ-Երկու)...

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԱԲԳԱՐ

Հիմա մեր գնալու հերթն է: Մենք թմբուկ
չունենք, ես ինքս կը թմբթմբացնեմ. թըմբը,
թըմբը, թըմբը, թըմբը... Մենք գիտէք մէկով
աւելի ենք:

ՏԻԳՐԱՆԸՆՔ

Ի՞նչ կայ՝ որ մէկով աւելի ենք. Սուլթանի
զօրքերը պատերազմում երկու անգամ էլ
որ աւելի լինեն, նրանց էլի կը ջարդեն: Էյ, Ա-
զիզ փաշայ, եթէ դու վատ ես կառավարել,
մենք քեզ կը ծեծենք և կը թողնենք:

ԱԲԳԱՐ

Շատ լաւ. առանց քո սովորեցնելն էլ բանս
լաւ գիտեմ, քեզանից դաս չեմ առնի: Ե՞ս գի-
տեմ՝ ինչպէս կը կառավարեմ: (Առաջ քաշերով
մէկ ոտք, ծախ ծեռքը կը թնում է կողքին, իսկ
աջը առաջ պարզում): Տեսնում էք՝ ի՞նչ զօրավար
եմ, ինձպէս քաջը որտեղ կը գտնէք, որտեղից

կը ճարէք ինձպիսի գլխաւոր: Ես ոչինչից չեմ
վախենում, ոչինչից:

ԵՐԻԱՆԴԻ

Գիտենք, գիտենք, քաջ ես, խօսք չը կայ.
միայն հիմա դործը դրանում չէ:

ՏԻԳՐԱՆ

Իր տեղը պարծեցիր, այստեղ ի՞նչ ես մեծ
մեծ խօսում:

ԵՐԻԱՆԴԻ

Գիտէք հիմի ի՞նչ է հարկաւոր անել: Թող
Վարդանը իր զօրբով աւելի հեռանայ, իսկ մենք
գնալու փոխանակ թաք կենանք միւս սենեա-
կում: Երբ նրանք անցնելիս կը լինեն, մենք
յանկարծ կը յար ձակւենք և կը ջարդենք: Լաւ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Լաւ լաւ. հիանալի է, կեցցէ, կեցցէ, եր-
ւանդ.

ԱԲԳԱՐ

Ես նրանց այն ժամանակ այ այսպէս կը
ծեծեմ, այ այսպէս (խիութ է ծեռքը ծեռքին):

ՏԻԳՐԱՆ

Կը տեսնենք, կը տեսնենք քո քաջութիւնը.
մեզ հօ օգնութեան չես կանչի:

ԱԲԳԱՐ (արհամարհանքով)

Շատ հարկաւոր է, ի հարկէ չեմ կանչի:

ԵՐԻԱՆԴԻ

Գնանք, տղայք, շուտով թաք կենանք. եթէ
ոչ, մեզ այստեղ կը գտնեն: Թաք կացէք աթոռ-
ների ետեր, մի քանիսն էլ սեղանի տակ: Գը-
նանք գնանք... կամաց, կիմանան:

ԵՐԵԽԱՆԵՐ

Կամաց, կամաց: Ա՛խ, միք թիկթիկացնի
(զնում են ձախ: Բեմը մնում է մի քանի բոլէ
դատարկ: Աչ զռնից յետոյ ներս են մանում
կամաց վարդանի զօրքերը:)

ՏԵՍԻԼ ԵՐԻՈՐԴԻ

ՎԱՐԴԱՆ (ցածր)

Կամաց, զինւորներ, կամաց: Մենք այստեղ
թաք կենանք, իսկ նրանք թող մեզ պըտրտեն
սենեակներում: Երբ այստեղ կը գան, մենք
յանկարծակի կը յարձակւենք և կը ջարդենք:
Նրանք այդ չեն էլ մտածի: Դէս, թաք կացէք,
միայն այնպէս, որ չերեաք:

ԳԱՅԻԱՆԵՐ

Ես պահարանի ետեր թաք կը կենամ (թազ-
նում է):

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ես կը նստեմ քաղկաթոռի ետեր, յա-
տակի վրա (թազնում է):

ՄԵԿԻ

Օգնեցէք պահարանի վրա բարձրանամ. ինձ
այնտեղ ոչոք չի գտնի (օգնութ են):

ՎԱՐԴԱՆ

Կարծեմ լաւ կը լինի, որ մոմերը հանգ-
ցնենք. մեզ այս ժամանակ բոլորովին չեն տեսնի
(հանգնութ է): իսկ հիմա ես ինքս կը թագըն-
ւեմ (թագնութ է):

ԳԱՅԻԱՆԻ (մի փոքր լոռվթինից յետոյ)
Մարգարիտ, ես հօ չեմ երկում:

ՄԱՐԴԱՑԻՑ

Սուս, կամաց: Զես երկում. իսկ ես:

ԳԱՅԻԱՆԻ

Դու էլ չես երկում:

ՎԱՐԴԱՆ

Այս ինչու այսպէս ուշացան:

ՄԵԿԻ (պահարանից)

Երեխ Տիգրանը կռւել է զլսաւորի հետ:

ՎԱՐԴԱՆ

Կամաց, կը լսեն: Գնամ իմանամ թէ՝ ինչ
են անում:

ԳԱՅԻԱՆԻ

Ուզում ես, ես կերթամ քո փոխանակ,

ՄԵԿԻ (արագ)

Աւելի լաւ է՝ ես կերթամ. ես շատ կամաց
կերթամ:

ՎԱՐԴԱՆ

Ո՞չ, ես ինքս կերթամ. դուք ձեր տեղե-
րում մնացէք: (Դուքս է զալիս աթոռի ետեւից
եւ չորս թաթի վրա զնում դէպի ծախ: Դիմացի
դռներից զալիս է Արգարը, մեռները առաջ պար-
զած, վախվիսլով):

ՏԵՍԻԼ ԶՈՐՈՌՈՒԴ

ԱԲԳԱՐ

Ա՛խ, ինչու զլսաւոր դառայ. չէի դառնայ,
եթէ իմանայի, որ մութ սենեակներում պէտք
է ման գամ: Վայ, ով է այստեղ մոմերը հանգ-
ցրել: Այ, այ, այ, կարծեմ, այստեղ անկիւնում
մէկը շարժւում է: Աւելի լաւ է ետ գնամ: Կեր-
թամ կասեմ, որ ոչոք չը կար: Բայց այն չար
Տիգրանը ի՞նչ կասի, նա ինձ հօ կը ծաղրի. նա
միշտ ինձ վրա ծիծաղում է: (Դիպշելով Վարդա-
նին) Վայ, վայ, գողեր են. ազատեցէք, վայ,
վայ:

ՎԱՐԴԱՆ (արագ)

Ո՞վ է այդ, ով է Մարգարիտ, դու ես, ի՞նչ
է պատահել:

Ա.ԲԳԱՐ

Վայ, վայ, վայ:

Վ.ԱՐԴԱՆ

Վերջապէս ով ես, ի՞նչ ես անում:

Ա.ԲԳԱՐ

Մայրիկ, մայրիկ, ազատիր գողեր են (նըստում է յատակի վրա եւ երեսը ծածկելով՝ լալիս): Մայրիկ, ինձ սպանում են, խեղդնում են: (Մարզարիտը մտնում է բազմոցի տակ)

Վ.ԱՐԴԱՆ

Ախ, Աբգարն է բղաւում: Ի՞նչ է պատահել քեզ. որտեղ են գողերը, ինչու ես լաց լինում: (Ներս են վազում երեխաները: Երւանդը մու է ընթառվում:)

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԵՐԵԽԱՆԵՐ

Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, Աբգար, ինչու ես լաց լինում:

Ա.ԲԳԱՐ (լաց լինելով)

Ախ, վայ, վայ, վայ:

Վ.ԱՐԴԱՆ

Սա երկի վախեցել է. ինչու էր մենակ այս կողմը գալիս: Ինչու թողիք:

ԵՐԻԱՆԴ

Մենք թաք կացանք, ուզում էինք յանկարծ ձեզ վրայ թափւել, երբ դուք այն սենեակով պիտի անցնէիք...

Վ.ԱՐԴԱՆ

Թագ կացաք. հա, հա, հա: Այդ ի՞նչ-պէս եղաւ, որ մենք երկուսս էլ միևնոյն բանը հնարեցինք: Մենք էլ այստեղ թաք կացանք, հա, հա հա: (Երեխաները դուրս են զալիս իրենց տեղերից)

ՏԻԳՐԱՆ (Աբգարին)

Ի՞յ, վախկոտ, վախկոտ. քեզ վիրաւորեցին հա, վայտէ հրացանից թղթէ գնդակով:

Ա.ԲԳԱՐ

Ես վախեցայ:

ՏԻԳՐԱՆ

Այ թէ քաջ ես, ուզիլու որ լաւ զօրավար ես, կեցցէ: Շքանշան հօ չես ուզում որ տանք քաջութեանդ համար:

ՄԷԿԸ (սլահարանից)

Օգնեցէք, օգնեցէք ցած գամ (օգնում են):

ԵՐԻԱՆԴ

Այդ ժւը ես բարձրացել: Այդտեղից մեզ հետ ի՞նչպէս պէտք է պատերազմէիք:

ՄԱՐԴԱՐԻԾ (բազմոցի տակից դուրս նայելով)

Օգնեցէք ինձ էլ դուրս գամ: Այնպէս վա-

խեցայ, այնպէս վախեցայ, երբ Արգարը բղաւեց, որ ինքս էլ չը գիտեմ ինչպէս մտայ այսպէս հեռու, բազմոցի տակ:

ԵՐԻԱՆԴ

Այ թէ քաջեր ենք (ծիծաղում են):

ՏԻԴՐԱՆ

Շատ քաջ զինւորներ էք: Մութ սենեակ մտնել չէք համարձակւում, թաք էք կենում այնպէս, որ էլ դուրս գալ չէք կարողանում, իսկ դեռ էլի պատերազմել էք ուզում:

ԱԲԳԱՐ

Դու էլ ի՞նչ ես հպարտ հպարտ խօսում: Լաւ է որ ի՞նքդ չես վախենում, եթէ ոչ, ուրիշ բան կասէիր:

ԵՐԻԱՆԴ


Դէհ, տղայք, թողնենք պատերազմը միւս անգամւայ համար, երբ լոյս կը լինի և չենք էլ վախենայ, որ մոմերը կը հանգնեն.

ՎԱՐԴԱՆ

Այսպիսի պատերազմով մենք միմեանց քիթ ու պառնգը կը ջարդենք, մեր ծնողներին էլ կը բարկացնենք: Ոչ, աւելի լաւ է՝ էլ այսպէս չը խաղանք:

(ՎԱՐԴԱՆ)

ՀՊ-ՀՀՀԶՁՀ



ՀՀ Ազգային գրադարան



NL0396828

9478

«ՀԱՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Քսան օր գետնի տակ. Հ. Մե-
լիք-Հայկաղեանի 20 լ.
2. Կաքալիկ. երգ Յովհ. Թումանեա-
նի. նօտաներ Կոմիտաս վարդ. 20 լ.
3. Գիւղացին եւ Արջը. Աթ. Խնկո-
յեանի 25 լ.
4. Պըինցն ու ծիծեռնակը. Օսկար
Ռւայլի 20 լ.

(Այլ)

8/2 ԳԻՆ/8 է ԿՈՂԵԿ